ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի հոկտեմբերի 29-ի № 126-Ա

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 60-րդ հոդվածի 8-րդ մասով, Հաշվեքննիչ պալատը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի քաղաքացիական ծառայության (այսուհետ՝ քաղաքացիական ծառայություն) պաշտոններին Հաշվեքննիչ պալատում ծառայության համարժեք պաշտոններն են՝

1) քաղաքացիական ծառայության ղեկավար խմբի 3-րդ ենթախմբի պաշտոնը՝ Հաշվեքննիչ պալատի ծառայողների գլխավոր խմբի պաշտոնների 3-րդ ենթախմբի պաշտոնին,

2) քաղաքացիական ծառայության ղեկավար խմբի 4-րդ ենթախմբի պաշտոնը՝ Հաշվեքննիչ պալատի ծառայողների առաջատար խմբի պաշտոնների 1-ին ենթախմբի պաշտոնին,

3) քաղաքացիական ծառայության մասնագիտական խմբի 2-րդ ենթախմբի պաշտոնը՝ Հաշվեքննիչ պալատի ծառայողների առաջատար խմբի պաշտոնների 3-րդ ենթախմբի պաշտոնին,

4) քաղաքացիական ծառայության մասնագիտական խմբի 3-րդ ենթախմբի պաշտոնը՝ Հաշվեքննիչ պալատի ծառայողների կրտսեր խմբի պաշտոնների 1-ին ենթախմբի պաշտոնին,

5) քաղաքացիական ծառայության մասնագիտական խմբի 6-րդ ենթախմբի պաշտոնը՝ Հաշվեքննիչ պալատի ծառայողների կրտսեր խմբի պաշտոնների 3-րդ ենթախմբի պաշտոնին:

2. Սույն որոշման գործողությունը չի տարածվում հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների հետ կապված հարաբերությունների վրա:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2024 թվականի դեկտեմբերի 11-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ